

ԱՆՆԵԼԻՆ 50 ԱՄԵԱԿՆ ՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ

Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Առաջին Վեհափառ Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսաւորիչ շֆանշանը շնորհեց սրտաքան Տֆթ. Կարօ Յ. Կարապետեանին, որ ծանօթ է «ԱՆՆԵԼ» գրչանունով, իբրեւ բանաստեղծ եւ վիպագիր:

Վեհափառ Հայրապետին կոնդակը եւ շֆանշանը ԱՆՆԵԼին յանձնուեցան, իր 75 ամեակին եւ գրական գործունէութեան 50 ամեակին առիթով, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տրուած յայտագրի մը ընթացքին, 29 Օգոստոս 1997ին, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

ԱՆՆԵԼին կենսագրականը ներկայացուց իր զաւակը, Բարիգէն, սրտաքան Տֆթ. Վիգէն Կարապետեան: Բանաստեղծական հինգ հատորները եւ «Որդի Մարդոյ» հոգեբանական վիպագրութիւնը (1945 թուականէն սկսեալ հրատարակութեան տրուած) վերլուծական մօտեցումով ներկաներուն մատչելի դարձուց Տֆթ. Անուշ Նազգաշեանը: Իսկ ԱՆՆԵԼի ոտանաւորներէն եւ արձակ գրութիւններէն արտասանութիւններ կատարեցին ԱՆՆԵԼի

վեց թոռնիկներէն չորսը, Կարօ եւ Թորգոմ, Նանօր եւ Լորիկ, իսկ պատմուածքներէն «Խենթ Բիւզանդը» եւ «Որդի Մարդոյ» հատուած մը կարդացին Տ. Ընծանուէր Արդ. Բաբախանեան եւ ժառանգաւոր ուսանողներէն Վարդան Սարգսեան: Հանդիսավարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան, որ Վեհափառ Հայրապետին կոնդակի ընթերցումը կատարեց, Պատրիարք Սրբազան Հօր գնահատական խոսքին վերջաւորութեան: ԱՆՆԵԼ ստանալէն յետոյ Հայրապետին կոնդակը եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շֆանշանը, իր շնորհակալութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ յայտագրին մէջ բաժին առնողներուն, եւ անդրադարձաւ իր մանկութեան օրերէն երուսաղէմի Թարգմանչաց վարժարանի, Սուրբ Տեղեաց եւ Սրբոց Յակոբեանց Վանքի եւ Հայ կեանքին ազդեցութեանց իր կեանքի անումին եւ հետաքրքրութեանց կազմաւորման ընթացքին եւ ծանրացաւ սփիւռքի մէջ հայ գրողին տաղնապներուն եւ մտահոգութեանց:

ՆԵՐԿԱՅ ՄԸ